ՌՈՒԶԱՆՆԱ ՅԱԿՈՎԻ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոն

ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

21-րդ դարը նոր դարաշրջան է, երբ համաշխարհային տնտեսության միտումները առաջ են բերում բազմաթիվ մարտահրավերներ, որոնց դիմակայելու միակ ուղին արագացող տեխնոլոգիական, սոցիալական, մշակութային փոփոխություններին հարմարվելն է: ԼՂՀ-ի համար այդ մարտահրավերները կրկնապատկվում են աշխարհաքաղաքական ներկա զարգացումներով, երկրի յուրահատուկ իրավիճակով և նրա շուրջ տեղի ունեցող մտահոգիչ իրադարձություններով պայմանավորված: Այդ առումով ներկա պայմաններում հանրապետության հիմնական մարտահրավերների շարքում կարելի է ընդգծել նաև Ադրբեջանի վարած ռազմատենչ քաղաքականությունը՝ որպես երկրի դեմ ուղղված անմիջական ռազմական սպառնալիք: Հատկապես վերջերս Արցախի դեմ Ադրբեջանի սկսած քառօրյա պատերազմը և շարունակվող մարտական գործողությունները լուրջ մարտահրավեր են ԼՂՀ և ՀՀ համար, որի արդյունքում ԼՂՀ տնտեսությունը կկրի ուղղակի և անուղղակի վնասներ, ինչը միանշանակ տնտեսական զարգացման խաթարման պատճառ կարող է հանդիսանալ:

Ձևավորված իրավիճակում կարծում ենք ԼՂՀ տնտեսության զարգացման հրամայականը պետք է դառնա ինովացիոն զարգացման միջոցով գիտելիքահենք տնտեսության ձևավորումն ու կայացումը: ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության ամրապնդմանն ուղղված որոշակի քայլեր ձեռնարկվել են: Այդպիսին է Դիլիջանի տեխնոլոգիական դպրոցի բացումը, որը, գտնվելով ակտիվ համագործակցության մեջ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի հետ, առանձնանում է միջազգային ստանդարտներին համապատասխան ուսումնական ծրագրերով, փորձառու մասնագետներով, բազմակողմանի զարգացում ապահովող առարկայացանկով և համարվում է միջազգային կրթության բարձրագույն նվաճումների ազգային բյուրեղացումը: Կարծում ենք, որ նման որակի կրթություն հասանելի է նաև ԼՂՀ-ին, ուր մշակվել և մշակվում են կադրային, մասնագիտական որակավորման մի շարք ծրագրեր: Հատկապես վճռորոշ է Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) կենտրոնի դերը, որն ապահովում է SS ոլորտում բիզնեսի զարգացման համար բարենպաստ պայմաններ և փորձում նպաստել ԼՂՀ տնտեսության զարգացմանն ու բարգավաճմանը՝ սատարելով սկսնակ տեխնոլոգիական ընկերություններին: Կրթական ծրագրերի և մրցունակ աշխատուժի պատրաստմանը, ինովացիան խթանող բիզնես միջավայրի ձևավորմանը, տեխնոլոգիական ձեռներեցության խթանմանը զուգընթաց, այն նպատակ ունի տարածաշրջանում պատրաստել մրցունակ աշխատուժ և բարձրակարգ մասնագետներ: Այդ առումով խոշոր քայլ է նաև տարածաշրջանային նշանակության «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի ստեղծումը, որը նույնպես գիտության և կադրերի պատրաստման բնագավառներում աննախադեպ աճ ապահովելու նպատակ է հետապնդում: Նախատեսվում են կրթական նոր մոդելներ, մոտեցումներ, դասավանդման նոր մեթոդաբանություն և գաղափարախոսություն, ազգային հենքի վրա կրթական բարձրագույն ձեռքբերումների փորձարկման ու մշակման նոր հիմքեր՝ ի նպաստ գիտելիքահենք տնտեսության մրցունակության բարձրացման:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գիտելիքահենք տնտեսության մրցունակության հիմքում ընկած է հենց ինովացիան՝ գիտելիքը ուղղված նոր արտադրանքի, գործընթացների և ծառայությունների փոխակերպելու ճանապարհով հավելյալ տնտեսական արժեքի ստացմանը: Իհարկե, այս ոլորտում զարգացման ինստիտուցիոնալ որոշակի հիմքեր առկա են, սակայն հարկ ենք համարում առանձնացնել ներքոհիշյալ հիմնախնդիրները.

- գիտական հետազոտությունների և մշակումների առևտրայնացման ոչ արդյունավետ մակարդակը,
- օրենսդրահիրավական դաշտի անկատարությունը, որը դժվարացնում է մտավոր սեփականության նկատմամբ իրավունքի պաշտպանությունը,
- տեխնոպարկերի բացակայությունը՝ որպես ինովացիոն գլխավոր ենթակառուցվածքների,
- պետության կողմից կազմակերպությունների նորամուծական գործունեության ֆինանսավորման ոչ բավարար մակարդակը:

Ընդգծենք, որ ինովացիոն գործունեության զարգացումը պահանջում է առաջին հերթին կանոնակարգված և հիմնավորված ֆինանսական միջոցների ստեղծում: Սակայն, հաշվի առնելով երկրի բյուջետային միջոցների անբավարարությունը, նորամուծություններին ուղղվող ծախսերի ավելացում կարելի է ակնկալել միայն հայրենական գործարարության ինովացիոն ակտիվության ընդլայնումից: Այդ առումով կարծում ենք, որ ԼՂՀ-ում գիտելիքի տնտեսություն տանող ամենահիրական ճանապարհը պետք է դառնա արտասահմանյան մասնավոր կապիտալի ներհոսքը:

Ընդհանրացնելով կարելի է առանձնացնել ԼՂՀ ինովացիոն զարգացման ներքոհիշյալ գերակա ուղղությունները.

- միջազգային գիտելիքն ու ֆինանսավորման աղբյուրները մատչելի դարձնելը,
- բարձրակարգ մասնագետներ պատրաստելը,
- տեղական ընկերությունները գլոբալ ցանցերում ընդգրկելու հնարավորությունների ընդլայնումն ու կատարելագործումը:

Վերոնշյալ միջոցառումները միանշանակ կհանգեցնեն հասարակության կյանքի որակի բարձրացմանը, տնտեսության զարգացմանն ու առաջընթացի ապահովմանը:

Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակված Համաշխարհային ռիսկերի զեկույցի՝ 2016թ. գլոբալ ռիսկերի ցանկում կարևորվում են պարտադրված միգրացիոն հոսքերը: Ամենահավանական ռիսկը համարվում է արտագաղթը: Ներկա պայմաններում ԼՂՀ-ի շուրջը տեղի ունեցող մտահոգիչ իրադարձությունները անկասկած բացասական ազդեցություն կունենան երկրի ժողովրդագրական իրավիճակի վրա, կավելանա արտագաղթողների թիվը, ինչը պետության և ազգային անվտանգության համար լուրջ սպառնալիք է: Հանրապետությունում պետականության գոյությանը սպառնացող ահավոր վտանգը՝ արտագաղթը, բացատրվում է ոչ միայն ապագայի նկատմամբ հավատ ու երաշխիք չունենալու հուսահատությամբ, այլև սոցիալական անարդարությամբ, աշխատանքային ներուժի ոչ արդյունավետ օգտագործմամբ:

Այդ պայմաններում հանրապետությունն ստիպված էր դիմագրավել ժողովրդագրական լուրջ մարտահրավերների: Հրատապ խնդիր է առաջացել՝ որդեգրել ժողովրդագրական նոր քաղաքականություն, ինչը կկանխի ժողովրդագրական բացասական երևույթների խորացումը և կստեղծի առկա իրավիճակը շտկելու և ժողովրդագրական զարգացման կայուն ու հետևողական միտումներ ապահովելու ծանրակշիռ նախադրյալներ:

ԼՂՀ կառավարությունը քաջ գիտակցում է ժողովրդագրական մարտահրավերների բարդությունը և համակարգված միջոցառումներ է ձեռնարկում խնդիրների լուծման ուղղությամբ: Դրա վկայությունն է «ԼՂՀ պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2015-2016 թվականների ծրագիրը», որը բխում է ԼՂՀ կառավարության 2010թ. հունվարի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» N 21-Ն որոշման պահանջներից: Ծրագրի հիմնական նպատակը երկրում ժողովրդագրական բացասական միտումների կանխումն ու իրավիճակի կայունացումը ապահովող միջոցառումների իրականացումն է:

2014թ. միգրացիոն տեղաշարժերի տարեկան ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետությունում ներքին միգրացիոն տեղաշարժերում ներգրավված է եղել 1347 մարդ, որից 455 երեխա: Միգրացիայի մնացորդը 2014թ. կազմել է 368 մարդ՝ 2013 թ. 312 մարդու դիմաց: 2014թ. եկողների թիվը 1000 բնակչի հաշվով կազմել է 6.4 մարդ, մեկնողներինը՝ 3.9 մարդ՝ 2013թ., համապատասխանաբար, 5.8 մարդու և 3.7 մարդու դիմաց[1]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պոտենցիալ միգրանտների մեկնելու ամենահավանական ուղղությունը Ռուսաստանն է: Տնային ծառայություններում, շինարարության և տրանսպորտի ոլորտներում զբաղվածները ավելի հակված են արտագաղթելու ցանկություն հայտնելու, քան այլ պատրաստվածության տեր մարդիկ: Արտագաղթին նախապատրաստվելու հարցում տեղեկատվության և աջակցության հիմնական աղբյուրները սոցիալական կապերն են: Ռուսաստանի՝ որպես միգրացիոն ուղղության, ժողովրդականությունը կարելի է բացատրել երկիր մուտք գործելու հեշտությամբ, տեղի լեզվին տիրապետելով, աշխատանք գտնելու, ինչպես նաև Ռուսաստանում արդեն գոյություն ունեցող սոցիալական կապերով:

[1] Հաշվարկները կատարված են ԼՂՀ ԱՎԾ 2015թ. պաշտոնական տվյալների հիման վրա:

Աշխատանքային միգրացիայի շուրջ չկան միանշանակ դրական կամ բացասական արդյունքներ: Աշխատողները, ովքեր հայրենի երկրում գործազուրկ էին, աշխատանք են գտնում արտերկրում, դրամական փոխանցումներ են կատարում իրենց ընտանիքներին՝ այդ կերպ կրճատելով աղքատությունը և առաջացնելով ներդրումներ, որոնք արագացնում են տնտեսության աճը և աշխատատեղերի ստեղծումը, և վերադառնում նոր հմտություններով և տեխնոլոգիաներով, որոնք հանգեցնում են նոր արտադրության և աշխատատեղերի ստեղծման: Այնուհանդերձ, տնտեսական դրդապատճառներով տեղի ունեցող միգրացիան կարող է նաև բացասական գործընթացի հիմք դառնալ այն դեպքերում, երբ որոշակի մասնագիտությունների տեր անձինք, աշխատանք են ստանում արտերկրում, իսկ հայրենի երկրի տնտեսության համապատասխան ոլորտներում չկան մասնագիտական հմտություններ ունեցող մասնագետներ, որի հետևանքով տուժում է համապատասխան արտադրության և ծառայությունների որակը և քանակը: Այս դեպքում դրամական փոխանցումները, եթե այդպիսիք կան, վերածվում են գնաճը խթանող գործոնների, քանի որ ուղղվում են սպառմանը, ոչ թե աշխատատեղերի ստեղծմանը:

ԼՂՀ-ում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը կարող է նպաստել Արցախ վերադառնալու ցանկություն հայտնած ընտանիքների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, նրանց բնակտարածքով ապահովման աշխատանքների արդյունավետության բարձրացման, զբաղվածության և մի շարք այլ խնդիրների լուծման ուղղությամբ հանրապետությունում իրականացվող միգրացիոն քաղաքականությունը: Այդ նպատակով 1994թ.-ից ի վեր ԼՂՀ կառավարությունն իրականացնում է «Վերադարձ Արցախ» ծրագիրը: Նպատակն էր՝ վերաբնակեցնել և վերականգնել պատերազմական գործողությունների հետևանքով ամայացած Արցախի տարածքները: Աշխատանքը տարվում է երկու ուղղությամբ՝ նորաստեղծ գյուղերի բնակեցում և գյուղերի հզորացում:

Կարծում ենք, որ վերաբնակեցումը այն կարևոր ռազմավարական խնդիրն է, որի ճիշտ և արդյունավետ իրականացման դեպքում հնարավոր է խթանել ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացումը, լուծել ԼՂՀ թերբնակեցված շրջանների բնակեցման խնդիրը, ինչպես նաև դեմոգրաֆիական գործոնի հետևանքով փոփոխության ենթարկված աշխատանքային ռեսուրսների կազմը: Պետք է ակնկալել, որ, ի դեմս հայրենադարձների, կունենանք ոչ թե սոցիալապես անապահով խավ, այլ տնտեսական ներուժ:

ԼՂՀ-ում դիտվող հիմնական վտանգավոր միտումը ծնելիության գործակցի դեռևս ցածր մակարդակն է, ինչը շատ հաճախ նույնիսկ չի ապահովում բնակչության պարզ վերարտադրությունը: Հարկ է ընդգծել, որ 2014թ. հանրապետությունում գրանցվել է 2428 ծնունդ, որը 2013թ. համեմատ ավելացել է 57-ով: Հանրապետությունում 2004-2014 թվականներին գրանցված ծնունդների թիվը ներկայացվում է ստորև բերվող գծապատկերում[1].

Գծապատկեր 1

Ծնունդների բաշխումը 2008-2014 թվականներին



Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկրում ծնելիության դեռևս ցածր ցուցանիշը պայմանավորող գործոններից է ամուսնությունների ոչ բավարար մակարդակը: Այսպես, 2014թ. գրանցված ամուսնությունները 2013թ. համեմատ աճել են 450-ով և կազմել 1412 դեպք, իսկ

[1] www.stat-nkr.am

ամուսնալուծությունները՝ 14.6 %-ով կամ 27-ով և կազմել 212 դեպք: Ընդհանուր առմամբ 2004-2014թթ. ամուսնությունների միջին ցուցանիշը կազմել է 1116 դեպք[1]:

ԼՂՀ-ում 2014թ. «Ծնելիության և բազմազավակության խթանման» ծրագրի շրջանակներում շարունակվել է երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստների տրամադրումն ու 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի անվամբ նպատակային ժամկետային ավանդների բացումը: 2014թ. այդ ծրագրի ընդհանուր ծախսը կազմել է 1092,3 մլն դրամ: Շարունակվել են նաև ծնելիության խթանմանն ուղղված վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների համար նոր բնակելի տների կառուցման աշխատանքները, որն իրականացվում է կապիտալ ներդրումների ծրագրով: 2014թ. հաշվառվել են 51 ընտանիքներ: Իրականացվում է «Նորաստեղծ ընտանիքներին ամուսնության միանվագ նպաստի տրամադրում» ծրագրի շրջանակներում տրվող նպաստի հատկացումը ամուսիններից յուրաքանչյուրին՝ 150,0 հազ. դրամի չափով[2]:

Նկատենք, որ չնայած ձևավորված աշխարհաքաղաքական բարդ իրավիճակին, ընթացիկ տարում երկրում ծնելիության ցուցանիշի բարելավմանը կարող է նպաստել 2015թ. նոյեմբերին «Հայաստան» համահայկական հիմնադրամի շրջանակներում կայացած հեռուստամարաթոնը, որի գլխավոր նշանակետն է՝ Արցախում հինգ և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին բնակարանային պայմաններով ապահովելը[3]: Կարծում ենք, որ այդ ծրագիրը կխթանի ոչ միայն ծնելիության մակարդակի բարձրացմանը, այլև կբարելավի բնակչության սոցիալ-կենցաղային պայմաններն ու ընդհանուր ժողովրդագրական իրավիճակը, քանի որ ընտանիքների բարեկեցությունը Արցախի զարգացման նախադրյալներց է:

Հանրապետության տնտեսությունում խոցելի է դառնում նաև նվազող տրանսֆերտային ներհոսքի և մետաղների համաշխարհային գների մակարդակի, արտաքին շուկաների անկայունության խորացման հետևանքով արտահանման տեմպի թուլացումը:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԼՂՀ-ում որպես առավել էական ռիսկեր կարելի է առանձնացնել. ֆիսկալ ճգնաժամը, արտարժութային, էներգակիրների, հումքային ռեսուրսների գնային տատանումները, տարածաշրջանում ռազմական դիմակայության սրումը, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ ժողովրդագրական և անվտանգային հավասարակշռության խախտումը: Հանրապետությունում ձևավորված ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտաքին և ներքին ներքոհիշյալ հիմնախնդիրներով.

- Տնտեսության մեջ դիտարկվող պարտքի չափազանց մեծ բեռի առկայությունը, ինչը սահմանափակում է տնտեսվարող սուբյեկտների ակտիվ գործունեությունը:
- Երկրի միջազգայնորեն չճանաչված լինելու հանգամանքը և տարածաշրջանային անկայուն վիճակը, ինչպես նաև օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի ոչ ամբողջական լինելը, ինչը խոշոր խոչընդոտ է ներդրումների ներգրավման տեսակետից:
- Տնտեսության տեխնոլոգիական վերազինումը, առանց որի անհնար է տնտեսական առաջընթաց արձանագրել: Այս տեսանկյունից կարևոր է տեղեկատվական տեխնոլոգիաների ու ինովացիաների ոլորտի գերակայությունը:

Վերը նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ երկրի տնտեսական զարգացման առանցքը տնտեսության ճկունության բարձրացումն է, արտահանման ապրանքային և աշխարհագրական դիվերսիֆիկացումը, ինովացիոն զարգացման համար անհրաժեշտ կառուցակարգերի ձևավորումը, արտաքին բացասական ազդեցությունների նկատմամբ տնտեսության զգայունության նվազեցումը և, ընդհանուր առմամբ, երկրի տնտեսական անվտանգության ապահովումը:

---

[1] www.stat-nkr.am

[2] ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2014 թվականին վարած քաղաքականության, իրականացրած միջոցառումների և ստացված արդյունքների մասին հաշվետվություն:

[3] himnadram.org

ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

ՌՈՒԶԱՆՆԱ ՅԱԿՈՎԻ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոն

Համառոտագիր

Հոդվածում դիտարկվում են տնտեսության արդի մարտահրավերներն ու ռիսկերը, ինչպես նաև դրանց կանխատեսման արդյունավետ մեխանիզմների դերն ու նշանակությունը տնտեսության կայուն զարգացման գործում: Մեկնաբանվում են համաշխարհային տնտեսությունում կանխատեսվող ապագա փոփոխություններն ու տեղաշարժերը: Գլոբալ տնտեսական մարտահրավերների համատեքստում դիտարկվում են ԼՂՀ տնտեսական ռիսկերն ու մարտահրավերները:

Բանալի բառեր. *միգրացիա, արտագաղթ, մրցունակություն, ինովացիա, տնտեսական մարտահրավերներ, գլոբալ ռիսկեր, գիտելիքահենք տնտեսություն, տնտեսական զարգացում:*

СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ НКР

РУЗАННА ЯКОВЛЕВНА МАНГАСАРЯН, *к.э.н доцент*
Кафедра экономической теории и управления Арцахского государственного университета

Аннотация

В статье рассматриваются современные вызовы и риски экономики, а также роль и значение эффективных механизмов их прогнозирования в развитии устойчивой экономики. Дается интерпретация прогнозируемых будущих изменений и сдвигов в мировой экономике. Автором рассматриваются также экономические риски и вызовы в НКР в контексте глобальных экономических вызовов.

Ключевые слова: *миграция, эмиграция, конкурентоспособность, инновации, экономические вызовы, глобальные риски, наукоемкая экономика, экономическое развитие.*

CURRENT CHALLANGES FOR DEVELOPMENT OF THE NKR ECONOMY

RUZANNA YAKOV MANGASARYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Chair of Economic Theory and Management, Artsakh State University

Abstract

In the article the current challenges and risks to the economy as well as the role and the importance of the mechanisms for predicting the stable development of the economy are considered. Moreover, the future changes and the shifts in the global economy are also illustrated. The current economic risks and challenges of the NKR are considered in the context of the global economic challenges.

Keywords: *Migration, emigration, competitiveness, innovation, economic challenges, global risks, knowledge-based economy, economic development.*